



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

---

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

18 հոկտեմբերի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի  
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Հ. Նազարյանի

Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի

Ա. Խաչատրյանի

Ուսումնասիրելով «Լուսավոր Հայաստան», «Հանրապետություն», «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունների անհատական դիմումի ընդունելիության հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «Լուսավոր Հայաստան», «Հանրապետություն», «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունները 06.10.2017թ. դիմել են ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ և 7-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել «ՀՀ «Ընտրական» օրենսգիրք սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 8-րդ մասի՝ «թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակը գրանցած ընտրական հանձնաժողովը դիմում է դատարան՝ թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության

ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար» սահմանված դրույթը»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. 02.04.2017թ. կայանալիք ՀՀ ԱԺ VI գումարման ընտրություններում ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից գրանցվել է Հայաստանի Հանրապետական կուսակցության ընտրական ցուցակը: 28.03.2017թ. «Ելք» կուսակցությունների դաշինքը դիմել է ԿԸՀ՝ ՀՀԿ ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու պահանջի մասին հայցով դատարան դիմելու պահանջով: ԿԸՀ-Ն իր՝ 31.03.2017թ. N 146-Ա որոշմամբ մերժել է վերոնշյալ դիմումը: «Ելք» կուսակցությունների դաշինքը 01.04.2017թ. «ՀՀ ԿԸՀ 31.03.2017թ. N 146-Ա որոշումն անվավեր ճանաչելու և Հանրապետական կուսակցության ցուցակի գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին» հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան, որն ընդունվել է վարույթ: Վարչական դատարանը 02.04.2017թ. կայացրել է «Գործի վարույթը կարճելու մասին» որոշում, որը վերջնական է և ենթակա չէ վիճարկման:

3. Դիմողների՝ վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ փաստարկները հանգում են հետևյալին. դիմողները, վկայակոչելով դատական պաշտպանության և արդարադատության մատչելիության իրավունքների վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք իրավական դիրքորոշումներ, կատարում են ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով նախատեսված՝ դատական պաշտպանության իրավունքի և դրա արդյունավետ իրացման ապահովման, մատչելիության և արդյունավետ միջոցների իրավական չափորոշիչների երաշխավորվածության հարցադրում:

Դիմողները նշում են, որ սահմանադրաիրավական վեճի առարկա դրույթով սահմանված է ընթացակարգ, ըստ որի՝ թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու հայցով դատարան դիմելու իրավասություն ունի բացառապես այդ իրավասուբյեկտին **գրանցած հանձնաժողովը**՝ կա՛մ սեփական նախաձեռնությամբ, կա՛մ մրցակից իրավասուբյեկտների՝ իրեն ուղղված դիմումի հիման վրա:

Դիմողների կարծիքով՝ վիճարկվող դրույթով սահմանված իրավակարգավորումների համաձայն՝ համապատասխան հանձնաժողովը կաշկանդված չէ պասիվ ընտրա-

կան իրավունքի իրավասուբյեկտի՝ այլ սուբյեկտի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու հայց դատարան ներկայացնելու պահանջի մասին իրեն ուղղված դիմումով և որպես բացարձակ հայեցողական և քաղաքական որոշման արդյունք՝ դիմում է կամ չի դիմում վարչական դատարան:

Ըստ դիմողների՝ վիճարկվող իրավակարգավորմամբ նախատեսված սահմանափակումը ողջամիտ չէ, ինչի արդյունքում պասիվ ընտրական իրավունքի սուբյեկտների՝ դատարան դիմելու իրավունքը դառնում է վերացական, պատրանքային՝ պայմանավորված հանրային իշխանության մարմնի հայեցողությամբ:

4. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով, Սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ գործի քննության ընդունումը Սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման՝ դիմումի ակնհայտ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

Գործի դատավարական նախապատմությունը վկայում է, որ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը 31.03.2017 թվականի N 146-Ա որոշմամբ մերժել է «Ելք» կուսակցությունների դաշինքի դիմումը՝ 2017 թվականի ապրիլի 2-ին կայանալիք ՀՀ ԱԺ 6-րդ գումարման ընտրություններում ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից գրանցված Հայաստանի Հանրապետական կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու պահանջի մասին հայցով դատարան դիմելու մասին: «Ելք» կուսակցությունների դաշինքը, ի թիվս այլնի, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նշյալ որոշումն անվավեր ճանաչելու պահանջով դիմել է ՀՀ վարչական դատարան: ՀՀ վարչական դատարանը 2017 թվականի ապրիլի 2-ի որոշմամբ կարճել է գործի վարույթը՝ այն պատճառաբանությամբ, որ «... ՀՀ վարչական դատարանն իրավասու է կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցումն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ հայցադիմումի հիման վրա հարուցված գործը քննել և վեճն ըստ էության լուծող դատական ակտ կայացնել մինչև քվեարկության նախորդ օրը...: Ուստի քվեարկության օրը սկսելու իրողությամբ այլևս առարկայագուրկ է կուսակցության ցուցակի կամ թեկնածուի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու գործընթացը: Սա նշանակում է, որ նշված ժամկետի ավարտից հետո ՀՀ վարչական դատարանն այլևս օժտված չէ հիշյալ ընտրական վեճը քննելու և այդ վեճն ըստ էության լուծող դատական

ակտ կայացնելու իրավասությամբ, իսկ հայցն այլևս ենթակա չէ դատարանում քննության: ... Եվ քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 209-րդ հոդվածով սահմանված ժամկետի ավարտմամբ ... ՀՀ վարչական դատարանն այլևս օժտված չէ սույն ընտրական վեճը քննելու և այդ վեճով ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու իրավասությամբ, իսկ հայցն էլ այդ դեպքում այլևս ենթակա չէ դատարանում քննության՝ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հայեցակարգի հաշվառմամբ նույն օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի ուժով ... կարճման է ենթակա նաև ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի թիվ 146-Ա որոշումն անվավեր ճանաչելու, ... «Ելք» կուսակցությունների դաշինքի հայցով հարուցված վարչական գործի վարույթը»: Այսինքն, դիմողների հայցը ՀՀ վարչական դատարանի կողմից կարճվել է ոչ թե այն հիմքով, որ դիմողներն առանց արտադատական հնարավորություններն սպառելու, այն է՝ առանց Կենտրոնական ընտրական հանձնաժողովին դիմելու, միանգամից դիմել են դատարան, այլ բոլորովին այլ հիմքով:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումների քննությունը ... կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է ...: ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՌ-21 որոշման համաձայն՝ այս պահանջի լույսի ներքո «սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելիս անձը պետք է հստակ պատկերացնի իր նկատմամբ վերջնական դատական ակտով կիրառված օրենքի **նորմի բովանդակությունը** և փորձի գնահատել ու նախատեսել սահմանադրական դատարանում իր իրավունքների պաշտպանությանն ուղղված և Սահմանադրությամբ ու օրենքով թույլատրելի հետագա գործողությունները, ինչպես նաև պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ է ակնկալում սահմանադրական դատարանում դիմումի քննության արդյունքում: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 4-րդ մասով ամրագրված՝ վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, ինքնանպատակ չէ և համաձայն դրա՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68 հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հատկանիշով, ինչը նշանակում է,

որ դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և **ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև**։ Այսինքն, վերոշարադրյալի համատեքստում կարելի է առանձնացնել հետևյալ երեք չափորոշիչները, որոնց միաժամանակյա առկայությունն անհրաժեշտ է օրենսդրությամբ նախատեսված՝ մերժման վերոնշյալ հիմքը բացառելու համար.

- անհատական դիմումը պետք է պարունակի դիմողի կողմից վիճարկվող իրավական նորմերի հակասահմանադրականության վերաբերյալ իրավական փաստարկներ, հիմնավորումներ,

- դիմողը պետք է մատնանշի սահմանադրական այն իրավունքները, որոնք խախտվել են վիճարկվող իրավական դրույթի կիրառման արդյունքում,

- դիմողը պետք է ցույց տա պատճառահետևանքային կապն առ այն, որ իր իրավունքների խախտման փաստը պայմանավորված է իր կողմից վիճարկվող իրավադրույթի ենթադրյալ հակասահմանադրական բովանդակությամբ կամ իրավակիրառական պրակտիկայում վիճարկվող նորմին հաղորդած ենթադրյալ հակասահմանադրական բովանդակությամբ:

Վիճարկվող վերոնշյալ դրույթի վերաբերյալ դիմողների ներկայացրած փաստարկների, ինչպես նաև գործով դատական ակտի ուսումնասիրությունը վկայում է, որ խնդրո առարկա գործի շրջանակներում առկա չէ պատճառահետևանքային կապն առ այն, որ դիմողների իրավունքների խախտման փաստը պայմանավորված է նրանց կողմից վիճարկվող իրավադրույթի ենթադրյալ հակասահմանադրական բովանդակությամբ կամ իրավակիրառական պրակտիկայում վիճարկվող նորմին հաղորդած ենթադրյալ հակասահմանադրական բովանդակությամբ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին և 6-րդ կետերով, ինչպես նաև 69-րդ հոդվածի 7-րդ մասով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

**Ո Ր Ո Շ Ե Ց .**

«Լուսավոր Հայաստան», «Հանրապետություն», «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունների անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

**Նախագահող՝**

**Անդամներ՝**

18 հոկտեմբերի 2017 Մի ԵՊԿ  
ԵՊԿ ԻՅԿ/2-23